


Փաստ. անվանումը	ԵՄՀ յունիթների հրատարակման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-25-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Միջազգային կապերի և հետազոտությունների բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Միջազգային կապերի և հետազոտությունների բաժնի պատասխանատու



ԿԱՐԳ

ԵՄՇ ՅՈՒՆԻԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

1. ԵՄՇ ամբիոնի վարիչները քննարկումներ են կազմակերպում ԵՄՇ դասախոսների հետ յունիթների հրատարակման շուրջ մտազրոհ իրականացնելու նպատակով:
2. ԵՄՇ ամբիոնի վարիչներն ապահովում են ռեկտորատի նիստում դասախոսների ներկայացուցչականությունը ներկայացնելով նրանց առաջարկներն ու մոտեցումները՝ կապված յունիթների հրատարակման և վերահրատարակման հետ
3. ԵՄՇ յունիթների հրատարակման և վերահրատարակման մասին որոշումներն ընդունվում են ռեկտորատի նիստում:
4. Ռեկտորատի նիստի որոշումների հիման վրա յունիթներին վերաբերող հիմնադրույթները քննարկվում են ամբիոնի վարիչների և ամբիոնի դասախոսների կողմից յունիթների հրատարակման և վերահրատարակման գործընթացը մեկնարկելու նպատակով:
5. ԵՄՇ յունիթների հիման վրա ստեղծվում են էլեկտրոնային դասընթացներ, որոնք վարելու համար դասախոսը ԵՄՇ նախաձեռնությամբ և պատվերով վճարվում է ինչպես դասընթացը մշակելու, այնպես էլ վարելու համար:
6. Դասախոսին վճարելու պարագայում նրա հետ կնքվում է հեղինակային իրավունքի պահպանման պայմանագիր, ըստ որի մշակված դասընթացի հեղինակ դասախոսը իր կողմից տրամադրած նյութը ճանաչում է որպես համալսարանի սեփականություն և կանխարգելում վերջինիս օգտագործումը այլ բուհերում, կամ համալսարանի կողմից չնախատեսված կրթական ծրագրերում:
7. Հրատարակվելիք յունիթի ծավալը քննարկվում է նախապես (ըստ վերջինիս միջոցով տրվող կրեդիտների քանակի, դասավանդվող առարկայի բնույթի), հաստատվում է այն ժամաքանակը, որը դասախոսը պլանավորում է ծախսել մշակման ընթացքում և վճարումը կատարվում է այն դրույքաչափով, որով տվյալ պահին դասախոսը դասավանդում է համալսարանում (օր. 1500 ՀՀ դրամ 40 րոպե դասաժամի համար, եթե դասախոսը գիտության թեկնածու է):
8. Եթե ԵՄՇ համար յունիթ է ստեղծում համալսարանում չդասավանդող փորձագետ, դասախոսը վճարվում է համալսարանում գործող տարակարգերին և դրույքաչափերին համապատասխան:

9. ԵՄՀ յունիթները հրատակվում են բացառապես յունիթներին ներկայացվող բոլոր չափանիշներին բավարարելու, համալսարանի կողմից ընտրված գրախոսի կողմից դրական կարծիքի տրամադրման պարագայում:
10. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ հետևյալ ընդհանուր գնահատման չափանիշների. յունիթում
- ներկայացված է դասընթացի արդիականությունն ու անհրաժեշտությունը
 - ներկայացված են դասընթացի վերաբերյալ համառոտ, հասկանալի և կոնկրետ տեղեկություններ,
 - ներկայացված նյութն ուշագրավ է և ուսանողին կտարամադրի դասավանդվող առարկան առավել մեծ հետաքրքրությամբ բացահայտելուն,
 - հստակ ներկայացված են դասընթացի ընդհանուր նպատակները,
 - ներկայացված է դասավանդողի փորձառության վերաբերյալ տեղեկատվություն:
11. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ վերջինիս շրջանակներում առկա ուսումնառության վերջնարդյունքների, որոնք գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների. յունիթում
1. հստակ նշված է, թե դասընթացի ամբողջական յուրացման արդյունքում ուսանողը ինչ կիմանա, կհասկանա և կկարողանա,
 2. ներկայացված ուսումնառության վերջնարդյունքները չափելի են, կոնկրետ և իրատեսական՝ ձեռք բերվելու համար դասընթացի ներկայացված ժամաքանակի և ծրագրի շրջանակներում,
 3. վերջնարդյունքները բխում են ԵՄՀ որակավորումների շրջանակից,
 4. վերջնարդյունքները բխում են ԵՄՀ տվյալ մասնագիտության համար մշակված որակավորումների շրջանակից:
12. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ վերջինիս բուն բովանդակության գնահատման հետևյալ չափանիշների. յունիթում
- հստակ տարանջատված են գլուխներն ու ենթագլուխները,
 - ներկայացված նյութը համապատասխանում է վերջինիս միջոցով տրամադրվող դասընթացի նպատակներին և նշված վերջնարդյունքներին,
 - ներկայացված տեսական նյութը հիմնավորված է գործնական հետաքրքիր օրինակներով,
 - յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացված է գործնական աշխատանք/ներ, հանձնարարություն (խրախուսվում է կոնկրետ դեպքերի, օրինակների ներառումը),
 - հնարավորության դեպքում տեսական նյութը միջազգային փորձից զատ, հիմնավորված է նաև հայկական ընկերությունների օրինակներով,
 - առաջադրանքները հետաքրքիր են, ուշագրավ, ուսանողների հետաքրասիրությունն արթնացնող,

- ներկայացված են գրականության ցանկը, օժանդակ նյութերի աղբյուրները,
- բովանդակության մեջ արտահայտված են նաև միջառարկայական կապերը,
- պահպանված են հեղինակային իրավունքները:

13. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ վերջինիս մեջ ներկայացված օգտագործված գրականության ցանկի և հղումների գնահատման հետևյալ չափանիշների. յունիթում

- օգտագործված գրականության ցանկը արդիական է, նյութը համապատասխանում է ժամանակի պահանջներին
- օգտագործված են ոչ միայն հայ հեղինակների աշխատանքները, այլ նաև օտարերկրյա, ուսումնասիրված է միջազգային փորձը,
- հղում է կատարված օգտագործված ինտերնետային կայքերին,
- օգտագործված աղբյուրներն ունեն գիտական հուսալիություն:

14. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ վերջինիս մեջ ներկայացված գրաֆիկական պատկերների, նկարների, սխեմաների գնահատման հետևյալ չափանիշների. յունիթում

- ներկայացված պատկերները, նկարները, սխեմաները հստակ են, ուշագրավ և մատուցում են արդի ու անհրաժեշտ տեղեկատվություն,
- խախտված չեն հեղինակային իրավունքները. եթե պատկերները, նկարները, սխեմաները վերցված են որևէ աղբյուրից, կատարված է համապատասխան հղում:

15. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է ըստ վերջինիս մեջ ներկայացված ուսանողի ինքնաստուգման հարցերի գնահատման հետևյալ չափանիշների.

- յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացված է ինքնաստուգման թեստային նվազագույնը 10 հարց (բազմակի ընտրությամբ, փակ հարցեր),
- յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացված է ինքնաստուգման նվազագույնը 5 բաց հարց, որոնք ունեն նյութում ներկայացված հստակ պատասխաններ,
- յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացված է նվազագույնը 4 մտորման բաց հարց, որոնք չունեն հստակ պատասխաններ և պահանջում են ուսանողի ստեղծագործական, վերլուծական մտածողությունը,
- յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացված է նվազագույնը դեբատի/քննարկման 4 թեմա, որը դասախոսը կարող է օգտագործել լսարանային քննարկումներ, կամ դեբատներ կազմակերպելու նպատակով:

16. Յունիթի հրատարակման մասին որոշումը կայացվում է, եթե այն համապատասխանում է հետևյալ տեխնիկական պահանջներին.

- գրված է Unicode որևէ տառատեսակով
- գրված է 12 տառաչափով
- տողերի հեռավորությունը` 1: